

Ս. ԲԱՐՍԵՂ ԿԵՍԱՐԱՑԻ

ԻՐ «ՎԵՑՈՐԵԱՅ» ՃԱՌԵՐԸ ԵՒ ՀԱՅ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆԸ

(Շար. տես «Բազմավեպ» 1934, էջ 327)

Ս. Բարսեղ, — որ իր վեցօրեայ ճառերուն մէջ անվիճելի հեղինակութեամբ մը կը ներկայանայ, ո՛չ միայն իբր գերազանց պերճախօս, այլ նոյնքան և աւելի՝ իբր խորունկ աստուածաբան և նրբամիտ իմաստասէր, — ընդհակառակն, այն բարձրութեան մէջ չէ՛ երբ բնական իրերու և գիտելիքներու վրայ կարծիքներ կը յայտնէ, որոնք թէև յոյժ շահեկան, բայց իր ժամանակին դրոշմը կը կրեն, և հետեւաբար ներկայ դարուս դրական և փորձառական պահանջներէն շատ հեռու են։ Եւս աւելի աստեղագիտական, տիեզերաբանական և աշխարհագրական ուսումներու մասին ունեցած ծանօթութիւնները՝ լի զանազան վրիպակներով՝ գիտական արժէքէ զուրկ են և շատ նիւթ կ'ընծայեն քննադատութեան, քանի որ իրեն միակ աղբիւր են՝ զած են հին գիտունները, իմաստասէրներն և պատմագիրները։ Այսպէս, օրինակի համար, հովերու և գետերու վրայ խօսած ատեն, յաճախ թերի և անկատար են իր տեղեկութիւնները, զորս քաղեր է զլիաւորապէս Արիստոտէլէն, և զարմա-

նալի է՝ որ կարծես իրեն անծանօթ է ժամանակով շատ աւելի մերձաւոր Պտղոմէոս անուանի աշխարհագիրը (Քրիստոսի Բ դարուն ապրած, իբր 120-170 թուականներուն), որ Աղեքսանդրիա քաղաքին մէջ թուաբանական և աշխարհագրական ուսմանց հոյակապ գործեր արտադրած է, սրբագրելով յաճախ հին իմաստասէրներուն և նոյն իսկ Արիստոտէլի ինչ ինչ անճիշդ կարծիքները։

Նախորդ յօդուածիս վերջին էջին վրայ՝ Ս. Բարսեղի խօսքերը մէջ բերած եմ, ուր Հոռոմանոս¹ գետին ակունքը կը դուրս Ռիպա² (Ռիպեան) լեռներուն մէջ, մինչդեռ Զուլիցերիոյ և Խալիոյ միջեւ Ալպանց S. Gothard կոչուած լեռնաշղթայէն է՝ որ կը բխի, և անցնելով Զուլիցերիայէն, Լեմանի լճին մէջէն և Գաղղիայէն, կ'երթայ կը թափի Միջերկրական ծովը։ Այսպէս նաեւ Տարտեսոս³ և Խատրոս⁴ գետերուն ակերը Պիրենեան լեռներուն մէջ կը դնէ Ս. Բարսեղ, մինչ առաջինը՝ Սպանիոյ մեծագոյն գետերէն մին՝ կը բխի Sierra-Nevada կոչուած լեռնաշղթայէն և կ'եր-

1. Հոռոմանոս գետը անծանօթ է մերիւններուն։ Խորենացւոյ Աշխարհագրութեան մէջ չի յիշուիր բնաւ, մինչ կը յիշուին Եւրոպայի ուրիշ այնքան փոքր և աննշան գետերը։ Ասով կարելի է անշուշտ բացատրել և արդարացնել չափով մը մեր թարգմանիչը, որ բնաւ մոքէն անցուցած չէ՛ որ 'Ροδανός կրնար յատուկ անուն ըլլալ, և թարգմանիչ է զայն իբր անծանօթ մը։

2. Ռիպա կամ Ռիպեան լեռները, որ հին ծանօթ Եւրոպիոյ հիւսիս-արեւել. սահմանները կը զննեն, հաւանօրէն այժմու Կարպաթեան լեռներն են։ Մ. Խորենացին կը դնէ զանոնք Գերմանիոյ և Սարմատացոց

աշխարհներուն մէջ. (Աշխարհագրութիւն. Վենետիկ. 1881. էջ 6 և 25)։

3. Տարտեսոս, լատիններէն Baetis կոչուած, ներկայապէս Guadalquivir կ'ըսուի, Արաբացոց տիրապետութեան ժամանակէն։

4. Խատրոս կամ Գանուր գետը կը յիշուի Խորենացւոյ Աշխարհագրութեան մէջ (էջ 15) աւելի ճշգրտէն, Պտղոմէոս աշխարհագրէն առնուած, Գաղմատիոյ և Գերմանիոյ սահմաններուն մէջ. «Գաղմատիա... առ երի Գերմանիոյ, սահմանի ակամբ Գանուր գետոյ»։

թայ Ատլանտեան ովկիանոս կը թափի. իսկ Խատրոս (Գանուր) Գերմանիոյ Սեւ-աւտաւ (Schwarzwald) կոչուած լեռներէն կը բխի, և կտրելով Աւստրիա, Հունգարիա և Պալքանեան երկիրները, կ'երթայ Սեւ ծով կը թափի։ Լսենք արդ հեղինակին խօսքերը։

Յոյժ ըմբռնող

Հայ թարգմանութիւնը (Վեցօր. Գ. էջ 55)

«Իսկ ի ջերին կողմանց արեւմտից, առ ոտամբ Պիրենեան լեռանց, Տարտեսոս և Խատրոս գետք ելան, որոց մին ի ծովն՝ որ անդր քան զարձանն է՝ մտանէ, և Խատրոս՝ անցնալ ընդ Եւրոպէ՝ երթայ մտանէ ի ծովն Պոնտոս»։

«Եւ դարձեալ այլ եւս գետք, որք յարեւմտից ելան են ի Պիրենեան լեռնէ, մին անուանեալ կոչի Տարտեսոս և միւսն Խատրոս, և անդր քան զարձանն է՝ կանգնեալ ի սահմանս ծովուն մտանն Պելպոննոս. բայց Խատրոս նախ ընդ աշխարհն թեպազոց անցանէ և ապա երթայ մտանէ ի ծովն Պոնտոս աշխարհին»։

Հոս թարգմանիչը զրեթէ չի շեղիր բնազրէն, ի բաց առեալ քանի մը յաւելուածոյ բառերը, որոնք չեն այլայլեր խօսքին իմաստը։ Սակայն բոլորովին աւելորդ և անտեղի է Պելպոննոս անունը, զոր անտարակոյս օրինակողներէն մին դրած է լուսանցքին վրայ թեպազոց անուան դիմաց, ինչպէս կը հաստատէ հրատարակիչը, որով պէտք չէր դրուիլ տպագրին մէջ, որ կրնայ շփոթութիւն պատճառել ընթերցողներուն, իբր թէ ծովուն անունն ըլլայ։ Գալով Εὐρώπη անուան, որ հայ թարգմանութեան մէջ «աշխարհ թեպազոց» եղեր է, կ'ենթադրեմ թէ թարգմանչին վրիպակը չէ՛, այլ զրչագիրներուն՝ որոնք դուրս թողեր են նախադաս եւր. իսկ յոյն στήλη բառը, որ «սիւն, կոթող, սահմանաքար» կը նշանակէ, հայը շատ վայելչօրէն «արձանք» թարգմանիչ է, որ իրապէս «Սիւնք Հերակլի» կոչուածն է, ինչպէս կը յիշէ նաեւ Եզնիկ իր գրքին մէջ «Արձանք Հերակլի» ըսելով։

Ասոր հակառակ, քանի մը տող վերջը,

1. Եզնիկ աղանդոց. Վենետիկ. 1826. էջ 219.

2. Թարգմանչին Եւպորիոս ըսածը՝ բնագրին «Արեւմտեան ծով» կոչածն է, այն է՝ Միջերկրականի

կը կաղայ հայ թարգմանութիւնը, երբնագիրը այնքան պարզ և յստակ է և շարունակութիւնն է նախորդին, ուր կը խօսուի քանի մը նաւարկելի գետերու վրայ, որոնք անցնելով Գաղղիոյ և դրացի երկիրներուն մէջէն, կ'երթան կը թափին Միջերկրական ծովը։

Յոյժ ըմբռնող

Հայ թարգմանութիւնը (Վեցօր. Գ. էջ 55-56)

«Եւ այլ գետք... որ են նաւագնացք (նաւարկելիք), յետ անցանելոյ ընդ աշխարհս արեւմտեան Գաղատացոց և Կեղտաց և դրացի բարբարոսաց, երթան մտանն ի ծովն Արեւմտեան»։

«Եւ այլ գետք, որ են... զնացք նաւուց, եթէ՛ ի բարբարոսս և ի Գաղատիա, զի անդ բազումք գետք խառնին ընդ միմեանս և յԵւպորիոս»։

Մարդ կարդալով հայ թարգմանութիւնը՝ կը զգայ անմիջապէս թէ թերի է նախադասութիւնը և կ'իստա մնացած։ Կը պակսի նախ «Կեղտք» անունը, — զանց եղած է Գաղատիա անուան առջեւ դրուած «արեւմտեան» անունը, որով կ'որոշուի փոքր Ասիոյ կամ «արեւելեան» Գաղատիայէն, — կը պակսի դարձեալ παρὰ μείζονα բայը (παρὰ μείζονα—անցանել, հոսիւ, զնալ), — զանց եղեր է նոյնպէս πέρασος (ծով) գոյականը, որուն անունը անունը (արեւմտեան) իբր յատուկ անուն առնուեր և դրուեր է Եւպորիոս². և այս բոլորը՝ երկու երեք տողի մէջ։

Ուրիշ տեղ թարգմանիչը, չգիտեմ իր վառ երեւակայութենէն մղուած, կը շփոթէ բնագրին իմաստը, կը ստեղծէ իրեր՝ որ գոյութիւն չունին. կեանք՝ շունչ և ոգի կու տայ անշունչ էակներուն, կը բազմացնէ՝ ինչ որ մէկ է, եւն։ Ասոր օրինակ մը կրնայ ըլլալ հետեւեալը, ուր Ս. Բարսեղ, մեկնելով Ս. Գրքին «Ժողովեացին ջուրքն որ ի ներքոյ երկնից ի Ժողով մի» խօսքը, կ'ըսէ թէ՛ անկէ առաջ գոյութիւն չունէին ներկայ ծովերը։

արեւմտեան մասը, ընդմէջ Սպանիոյ, Գաղղիոյ, Իտալիոյ և հիւսիս-արեւմտ. Ափրիկէի։

Յոյն բնագիրը

Հայ թարգմանությունը
(Վեցոր. Դ. էջ 79)

«Ձի ո՛չ էր յայնժամ
ծովն՝ որ արտաքոյ քան
գԳաղիբա է, և ո՛չ ծովն
այն մեծ ահագին (անմատ-
չելի) նաւորդաց, որ շուրջ
զկղզեաւն Քրիտանիոյ և
զարեւմտեան Իբերիացոյժը
պատի»:

«Ձի ո՛չ էր յայնժամ...
արտաքին աշխարհ Գաղի-
բովն ծովուն, և ո՛չ ծովն
մեծ, զոր ոչ երբեք կոխեաց
ոտն մարդոյ նաւազնաց
զնացիւք, որ ամենեւին յա-
մենայն ժամ յահ և յեր-
կիւղ մրմռեալ զազանա-
ցեալ սաստկանայ, և ո՛չ
ծովն միւս Բուրատինայ
կղզւոյն, և ո՛չ այն ծովն՝
որ անուանեալ կոչի Երե-
կորնեայց, վասն զի սահ-
մանակալ մտիցն արեւու
է, և ո՛չ ծովն Իբերիայ»:

Արդ զիտեղի է որ, հոս թարգմանիչը
«ծով» կ'ընէ Գաղիբա «քաղաք»ը, «ար-
տաքին աշխարհն՝ Գաղիբովն ծովուն»
ըսելով, փոխանակ թարգմանելու ըստ
բնագրին «ծովն՝ որ արտաքոյ Գաղիբոն
աշխարհին» (քաղաքին), — երկրորդ, «ծովն
մեծ՝ զոր ո՛չ երբեք կոխեաց ոտն մար-
դոյ», եւն, որ է՝ Ատլանտեան ովկիանոսը,
չորս ծովերու կը վերածէ թարգմանիչը.
ա. բուն իսկ ովկիանոսը, որու մասին է
հոս խօսքը. բ. «ծովն միւս Բուրատինա
կղզւոյն», գ. «ծովն՝ որ անուանեալ կոչի
Երեկորնեայց», դ. «ծովն Իբերիա»: —
Բնագրին երկու բառերը «ահագին (ան-
մատչելի) նաւորդաց», երկու և երեք տո-
ղով կը թարգմանէ հայը. «զոր ո՛չ երբեք
կոխեաց ոտն մարդոյ նաւազնաց զնացիւք,
որ ամենեւին յամենայն ժամ յահ և յեր-
կիւղ մրմռեալ զազանացեալ սաստկանայ».
Իսկ ἐσπερίους ածականը՝ Իբերիոյ (Սպա-
նիոյ) արեւմտեան եզերքին համար ըսուած՝
կ'ըլլայ հայերէնին մէջ, «ծովն Երեկոր-
նեայց, վասն զի սահմանակալ մտից ա-
րեւու է»: — «Գաղիբոն» կամ «Գաղիբա»
(յն. Γάδιρα, լատ. Gades) Սպանիոյ Ca-
dix կամ Cadice քաղաքն է: Այդ ա-
նունով կը կոչուէր հին ժամանակները
ձիւրալթարի նեղուցը, ինչպէս նաեւ լա-

1. Յոյն բառը πνεῦμα կը նշանակէ թէ՛ հոգի, ոգի,
շունչ և թէ՛ հոգի, ինչպէս կը հաստատէ Եզնիկ, թէ
«ոգոյն և հոգոյն անուն» երբայցեքէն և յունարէն և ա-
սորերէն՝ նոյն է. և կ'աւելցնէ. «Կա՛ թէ և հայերէն
ոք մանր միտ զիցէ, նոյնպէս գտանի. յորժամ տազնա-

տին անունէն շինուած՝ Gaditanum fre-
tum (Գադիտեան նեղուց) կ'ըսուէր, զոր
կը յիշէ Խորենացին իր Աշխարհագրու-
թեան մէջ «Կատնիղիա» (ուղղելի Կատնի-
ղիա) ըսելով, և կ'աւելցնէ «որ կոչի
Սեփոէ, զի եօթն մղոն ունի լայնութիւն
տեղւոյն, որ գետաբար մտանէ յովկիա-
նոսէ յԻբրեփիոն պերագոս» (Իբերեան կամ
Սպանիական ծով, որ է՝ արեւմտեան Միջ-
երկրականը)... «և բաժանէ ընդ Տիեզիկի
(Tangis կոչուած հինարէն, որ ներկայ
Tanger քաղաքն է) և ընդ Սպանիա աշ-
խարհ» (Մովս. Խոր. Աշխարհ. էջ 10):
Ներուի ինծի անգամ մ'եւս զիտեղ տա-
լու, որ մեր թարգմանիչը երբ կը հան-
դիպի այնպիսի տողերու և հատուածներու,
որոնք պարզ և յստակ են, և մանաւանդ
երբ նիւթը նկարագրական է, հոն կ'ոգե-
ւորուի, կը խանդավառուի, երեւակայու-
թիւնը կը տաքնայ, և այդ տպաւորութեան
տակ՝ կը ճոխանայ, թոյլ տալով զրչին
յորդելու լեզուին ամէնէն քնքուշ և գոյտը
բառերը, սիրուն դարձուածները: Բայց
երբ խոչընդակ մը կ'ելլէ զիմացը, դժուա-
րին բացատրութիւն մը՝ զոր անկարող
կ'ըլլայ ճշդիւ ըմբռնել, մանաւանդ երբ
վարդապետական է խնդիրը, կը տատամսի,
կը կարկամի, և խղճելով աւելի կամ պա-
կաս բան մ'ըսելէ, նիւթապէս կը թարգ-
մանէ բառերը, ընթերցողին թողնով անոր
իմաստին թափանցելու ճիգը կամ հոգը.
այս է հետեւեալ պարագան: Ս. Բարսեղ
մեկնելով Ս. Գրքին խօսքը, «Հոյ՛մ՝ Աս-
տուծոյ (այսպէս կը թարգմանէ հայը) շըը-
ջէր ի վերայ ջուրց», կ'ըսէ թէ, «վասն
Հոգւոյն Աստուծոյ պարտ է իմանալ ըզ-
բանն», ինչպէս հասկցեր և աւանդեր են
նախկին մեկնիչներ, և կ'աւելցնէ յետոյ
(ըստ հայ թարգմ.). «վասն այնորիկ ասեն
ժամապահ Գիրք մոռմանէ միանձնորեան
և զարմանալով գլխատակ նորա»²: Արդ

պիտի ոք յումնէ իցէ՛ ասէ. «Հետ ոգի կ'լանել. Հետ ոգի
անուի, և այնու գոգոյս՝ զոր միշտ ծծեմք, յայտ առ-
նէ». (Եղծ ազանդոց. էջ 90):
2. Վեցոր. Բ. էջ 35:

ի՛նչ կարելի է հասկնալ այս խօսքերէն,
որոնք պարզապէս նիւթական թարգմա-
նութիւնն են յունարէնին, չափազանց
կաշկանդուած յոյն բառերուն և քերա-
կանական ձեւերուն, առանց ընտրելու և
ճշդելու անոնց իմաստը, որով դուրս եկեր
է այդ մթին և տարտամ նախադասութիւնը,
որուն կրնայ լոյս տալ չափով մը բնա-
գիրը: Արդ յունարէնը կ'ըսէ. «վասն այ-
նորիկ Գիրք ընծայեն նմա (Հոգւոյն Աս-
տուծոյ) զայդ առանձինն սեփական և
սքանչելի կոչումն» (այն է՝ Հոյ՛մ կամ
շունչ Աստուծոյ): — Այսպէս, յոյն էփե-
փάνεια բառը՝ որ կը նշանակէ «յայտնու-
թիւն», կը նշանակէ նաեւ «երես, մակ-
երեւոյթ». ուստի թարգմանիչը երբ կը
տեսնէ τὰς ἐπιφανείας τῶν σομάτων, կը
դնէ «գլխաւորութիւն մարմնոցն», փոխա-
նակ թարգմանելու «զերես մարմնոցն»
(էջ 34), ինչպէս կը պահանջէ իմաստը:
Նոյնպէս δόξα կը նշանակէ «փառք», բայց
երբեմն կը նշանակէ նաեւ «միտք, կար-
ծիր». ուստի երբ յոյնը կ'ըսէ, «ի մե-
ծութենէ և ի գեղոյ արարածոց՝ միտս ար-
ժանաշուս ստասջիք զԱրարչէն», հայը կը
թարգմանէ, «աւելագ փառաշուրտքիւ մե-
ծազարդ աստուածութեան նորա տաջիք»
(էջ 65): Դարձեալ յոյն δρῶν բառը,
որ «անտառ, մայրի կաղնեաց» կը նշա-
նակէ, հայ թարգմանիչը կը դնէ «բնա-
կութիւն մեղուաց» (էջ 97), չգիտեմ ի՛նչ
կարգաւորվ կամ ի՛նչ բառի հետ չփոխելով:
Ասոնցմէ դուրս կան ուրիշ կարգ մը
վերապահներ, զորս չէ՛ կարելի թարգման-
չին վերագրել՝ այլ ձեռագրաց օրինակող-
ներուն, քանի որ անոնք յայտնապէս հայ
բառերուն սխալ ընթերցման կամ գրու-
թեան արդիւնք են, և հրատարակիչները
զիւրաւ պիտի կրնային ուղղել, գէթ ա-
մէնէն աւելի յայտնի սխալները, ինչպէս
ըրած են ինչ ինչ պարագաներու մէջ,
նոյն իսկ առանց բնագրին դիմելու հարկն
զգալու: Այդ վերապահներն կը զնեմ հոս
մէկ քանին, նշանակելով անոնց էջը և
տողը.

— «Խոստանալ» թէ պատճառը աշ-

խարհիս Աստուած է». (Վեցոր. էջ 13.
տող 18) — ուղղելի, խոստովանիւն (յոյն.
ὁμολογούσιν):

«Երեւցոյց պատմութեամբն զերկինս». (էջ 14. տող 7) — ուղղելի, կրիցացոյց
(յոյն. τὰ πρεσβεῖα... ἀποδοῦς):

— «Ձի մարդն ստեղծ երկրի չեւ եւս
էր եղեալ» (էջ 24. տող 29) — ուղղելի,
ստեղծ (յոյն. θεατῆς):

— «Առաջին բանին հաստատեալ կազ-
մեալ լիով իւրով բնութեամբ». (էջ 35.
տող 36-7) — ուղղելի, յոյսն (յոյն,
τὸ φῶς):

— «Եւ զատոյց մեկնեաց զվարս գնա-
ցից նոցա». (էջ 38. տող 36) — ուղղելի,
զվարս (յոյն, τὰ μέσα):

— «Որ լեզուն ընդ միմեանք». (էջ 47.
տող 36) — ուղղելի, զերես զմիմեանք
(յունարէն չկայ. թարգմանչին յաւե-
լուածն է):

— «Անդուստ ի խորոց կոչէին բազում
ջուրքն». (էջ 52. տող 16) — ուղղելի, աւե-
ղանդ խորոց (յոյն, ἄβυσσος):

— «Ջերմութիւնն արեգական ծծեաց
խմեաց զնոսա». (էջ 58. տող 18) — ուղ-
ղելի, քամեաց (նոյն բացատրութիւնը «ծը-
ծել քամել» կայ նաեւ ուրիշ տեղ. էջ 57.
տող 27):

— «Եւ ի բանիցն որ ընթանան առաջի
մեր». (էջ 68. տող 10) — ուղղելի, ընթեր-
ցան (յոյն, ἀναγνώσμενον):

— «Արդ յորժամ սարեւոյցի արեգակն». (էջ 127. տող 2) — ուղղելի, վերաւոյցի
(յոյն, ὑπεράργη):

— «Սրտին գնացս և ընթացս». (էջ 71.
տող 17) — ուղղելի, գտիւն (ըստ մեր Բ
օրինակին, յոյն չունի):

— «Կայանք ըստ օրինակի ամանոց կազ-
մեցան նոցա իշրաքանչիւր գործ յարարչէն». (էջ 72. տող 12) — ուղղելի, ի սրանչիւր-
գործ արարչէն (ըստ Բ օրինակին և բնա-
գրին):

— «Ի միարեւոյթիւն կողմանցն եր-
կոցունց» (էջ 40. տող 3) — ուղղելի, ի
միարեւոյթիւն (ըստ յունին և Բ օրինա-
կին):

— « Զոր... Արարչին սահման ելից » (էջ 72. տող 21) — ուղղելի, սահմանակից իցե (ըստ բնագրին և թ օրինակին):

Ասոնց նման վրիպակներ բազմաթիւ են, որոնք բնականաբար պիտի ուղղուին՝ ձեռագիր օրինակներուն և բնագրին հետ համեմատելով և ծանօթագրութեամբ, երբ առիթը ներկայանայ նոր հրատարակութիւն մ'ընելու այս հրաշալի գործին:

* *

Մինչեւ ցարդ վեցօրեայ ճառերուն հայ թարգմանութեան թերի կողմերուն վրայ խօսեցանք, մերթ արդարացնելով և մերթ քննադատելով, որոնք եթէ աղօտ ստուեր մը կը ձգեն թարգմանչին վրայ, սակայն չեն կարող նսեմացնել անգուգական հայագէտին արժանիքը, որ մեր Ոսկեղարու լաւագոյն գրիչներէն մին է, թերեւս և առաջինը՝ կարգով և ժամանակով: Իբր թարգմանիչ՝ զուրկ է գուցէ այն արուեստէն և ճարտարութենէն, զոր ունին Աստուածաշունչին, Ոսկեբերանի Մատթէի Աւետարանին և Պօղոսի քանի մը թուղթերուն մեկնութեանց, Սերբերիանոսի ճառերուն կամ Եփրեմի գործերուն թարգմանիչները, որոնք իսկապէս հմուտ և տիրացած այն լեզուներուն՝ որոնցմէ կը թարգմանէին, կըրցած են իրենց բնիկ լեզուին գեղեցկութեամբ և նրբութիւններով յարգարել իրենց թարգմանութիւնը՝ առանց շեղելու բնաւ բնագիրներէն: Սակայն նկատելու է, որ անոնց թարգմանած գործերը ընդհանրապէս զուտ կըրօնական և վարդապետական ըլլալով, և իրենք ալ՝ եկեղեցական գիտութեամբ և աստիճանով ճոխացած, ո՛չ միայն ո՛ր և է դժուարութեանց չէին բախեր իրենց աշխատութեան մէջ, այլ հաճոյք և վայելք կը զգային ընդհակառակն՝ ծանօթացնելու իրենց ազգայիններուն Ս. Գրքին և Ս. Հարց վսեմ վարդապետութիւնները և բարձր բարոյականը, որով միանգամայն պսակուած և բեղմնաւորած կ'ըլլային իրենց արդիւնքները: Իսկ Ս. Բարսեղի վեցօրեայ ճառերը. այո՛, ա-

նոնց մէջ ալ կան վարդապետական և բարոյական հիանալի էջեր, բայց նաեւ ո՛րչափ գիտական, ուսումնական, իմաստասիրական և ուրիշ կնճռոտ հարցեր և խնդիրներ, — ո՛րչափ անուններ և բառեր բոյսերու, կենդանիներու, ձկներու և ժժմակներու, միջատներու և թռչուններու, գետերու, ծովերու և աշխարհներու, եւն, — որոնք կրնային իրապէս անծանօթ ըլլալ Ե դարու հայ վարդապետի մը, որ զուրկ ամէն կարեւոր միջոցներէ, թերեւս իր հայրենի սահմաններէն իսկ երբեք դուրս չեւած, բնաւ յունական միջավայրի մէջ չապրած, ինչպէս պիտի կարենար գիտնալ և հայացնել զանոնք: Ի՞նչ ահագին ճիգեր, ի՞նչ մտքի և կամքի ուժեր պէտք էր ի գործ դնել, հայ լեզուն ճկելու, թերեւս, ճոխացնելու համար, որով կարող ըլլար բացատրել հելլէն լեզուին բոլոր նրբութիւնները, յոյն մտքին բոլոր յղացումները, երականական բոլոր բարդութիւնները, մանաւանդ որ ինքն էր որ այդ առաջին փորձը կ'ընէր գիտական նոր ասպարէզի մը վրայ: Ահա՛, այսպիսի յանդուգն և դժուարին դեր մ'էր որ կը ստանձնէր մեր թարգմանիչը, երբ հմայուած կեսարիոյ մեծ հայրապետին և անոր վեցօրեայ հոյակապ գործին համբաւէն, ձեռք կը զարնէր թարգմանելու զայն: Եւ կարելի է ըսել թէ, — հակառակ այն քան թերութեանց, անհասկացողութեանց և վրիպակներու, — յաջողած է իր գործին մէջ, երբ նկատի առնուին այն անթիւ էջերը, որոնց մէջ յայտ կը բերէ ան իր մայրենի լեզուին կատարեալ հմտութիւնը, ճոխութիւնը, նրբութիւնը և անոր զանձերը, որոնցմով զրեթէ նոր և չքնաղ փայլ մ'աւելցուցեր է, զոնէ հայ թարգմանութեան մէջ, հեղինակին արդէն հրաշալի գործին վրայ: Մեր Ոսկեղարու թարգմանութեանց մէջ ընդհանրապէս միակերպութիւն մը կայ, — ինչ որ գուցէ կը պահանջէր և կը պարտադրէր բնագիրը և նիւթը, — քանի որ թարգմանիչները պէտք էին քայլ առ քայլ հետեւիլ հեղինակին՝ երկիւղած վերաբերումով մը. մինչ սա, նիւթին և պարագային համեմատ, կը փո-

փոխէ իր ոճը, դարձուածները, մերթ չափազանց հաւատարիմ բնագրին, և ուրիշ անգամ ազատ թռչնով մը, աւելի իր անվտանգ երեւակայութեան հետեւելով վաւճառն երեւակայութեան հետեւելով, կ'ընդլայնէ, կը ճոխացնէ իմաստները՝ զաղափարները՝ զունագոյն պատկերներով, կը դիւթէ, կը յափշտակէ ընթերցողները: Ան՝ որ առաջին էջերուն մէջ կը վարանէր ինչպէս հայացնել յոյն բառերը, — ահա՛ կորովի ճիգերու և ջանքերու շնորհիւ՝ կը յաջողի վերջապէս զբաւարութեանց յաղթել, տիրանալ լիովին ժուարութեանց յաղթել, որով կը ստեղծանիւթին և արուեստին, որով կը ստեղծան գործէ՝ բարդ կամ ածանց՝ ամէնէն սիրուն և ընտիր բառերը, որոնցմով կարող կ'ըլլայ ճշգրտէն և գեղեցկօրէն արտայայտել հեղինակին ամէնէն մթին և բարձր մըտքերն և իմաստները, — կը յորդեն ու կը գերեն թարգմանչին գրչին տակ ամէնէն վայելուչ և կենսունակ բառերը, որոնք կը պարգեն առջեւին գիտական, ուսումնական, իմաստասիրական, աստղաբաշխական ամէնէն բարդ և շահեկան խնդիրները և բնութեան սիրալի երեւոյթները, — կը կարգանք հոն հայացած՝ թռչուններուն, կենդանիներուն, բոյսերուն սեփական առնունները, անոնց իւրաքանչիւր տեսակներուն, անոնց իւրաքանչիւր տեսակներուն, որոնցմէն (էջ 87, 97, 117-120, 162-163): Բայց մարդուս մեծագոյն հիացումը կը շարժեն այն աննման էջերը, ուր կը մըցի կարծես թարգմանիչը հեղինակին հետ, երբ լոյսին յանկարծածագ երեւումը կը նկարագրուի. ինչ-պիսի՛ պատկեր, ինչ հրաշալի տեսարան՝ որ կը բացուի մեր առջեւ. ինչպէս կը զուարթանայ հոգին, միտքը կը սաւառնի եթերէն վեր, սիրտը կը հրճուի, աչքերը կը զբօսնուն՝ կը պարարին, երբ կը կարգայ մարդ այն համակ լուսեղէն տողերը (էջ 36-38), — երբ կը տեսնէ զաւրազեղ մարգերուն վրայ յանկարծոյն փրթութեամբ ամենազան ծաղիկներուն՝ իրենց գունագեղ գոտար թերթիկներով և իրենց անուշ զգլխի բոյրերով, — երբ կը կանգնին ըստեմբար այն երկնաբերձ ոստախիտ մայրերը և մայրիկները այն բոլոր քաղցրա-

համ և գեղատեսիլ միրգերով ակաղճուն ծառերը, որոնցմով զմայլած մարդը՝ հոգեւուագ ուսանաններ կը բարձրացնէ Արարչին, ջինջ և պայծառ երկնքին մէջ պարող և ճախրող թռչուններուն դայլայլիկէն յորդորուած (էջ 96-99, 102-105): Երբ հեղինակը կը նկարագրէ տարւոյն չորս եղանակներուն իրարու յաջորդելը, հոն հայը սքանչացած նախախնամութեան յօրինած ներդաշնակ կարգաւորութեան վրայ, կը մոռնայ վայրկեան մը թարգմանչի դերը, և հեղինակօրէն կը պատկերացնէ առջեւին՝ այնպիսի կենդանի գոյնով՝ « զցրտաշունչ սառնասառոյց սառամանիս ձմեռայնոյ, և անձրեւայոյց և թօնքնկէց և բալածիգ և ձիւնաբեր » երեւոյթները, որ մարդ սարսուռ կը զգայ կարգացած ատեն, — ինչպէս երբ կ'ողջունէ գարնան « քաղցրախառն յօրինուածով յարգարուսն՝ իւրով մեծագեղ վայելչութեամբ... (յորժամ) արձակեն արմատը զբոյսս, մարգը զուարճանան, ծաղիկը պայծառանան, տունկը ցցուին, ծառը արձակեն բողբոջս », եւն, որով բնութիւնը կը զարթնուի, կը կենդանանայ, կը պճնուի « ազգի ազգի պայծառագարդ գունիւք ». մարդուս սիրտն ալ լեցնելով անհուն հրճուանքով և հմայքով (էջ 125-126):

Չեմ ուզեր երկարել խօսքս և տաղտուկ պատճառել ունկնդիրներուն, մէջ բերելով հոս թարգմանչին ոսկեղէն լեզուին, և ուժեղ ինքնատիպ մտքին բոլոր ծաղիկները՝ որոնք ցիր ու ցան սփռուած գործիս մէջ՝ գրական բուրաստանի մը երեւոյթը կ'ընծայեն անոր, եթէ մանաւանդ խլուին անկէ ինչ ինչ օտարոտի բոյսեր կամ փուշեր: Սակայն չեմ կրնար զանց ընել մէկ քանի կտորներ, որոնք իր ստեղծագործ մտքին լաւագոյն արտադրութիւններէն են: Այսպէս, օրինակ իմն երբ կը խօսի հեղինակը ծովերուն լայնածաւալ ընդարձակութեան, գեղեցկութեան, և անոնց առաւելութեան և մատուցած օգուտներուն վրայ, որ մերթ մեղմ և հանդարտիկ, կը ցոլացնեն իրենց մեղմ երկերը՝ կապուտակ կամարին անդոր-

ԻՍԶՄ. ՆՈՅՆԵՐԵՐ-ԳԵԿՏԵՐԵՐ 1934



բութիւնը և քան զայն անդրագոյն՝ եթե-
րային աշխարհներուն յաւերժական ե-
րանաւէտ խաղաղութիւնը, — և մերթ՝
«յուզեալ և զագանացեալ, ամբոխեալ ի
սաստկութենէ հողմոցն մրրկաց, ելանեն
վերանան ջուրքն ի բարձունս վերինս դէ-
զադէզ կուտակեալ, (և ապա) իջանեն բա-
խեն շուրջ զեզերքն փրփրեալք, սանձա-
կոծեալք, և միւսանգամ անդրէն ի ներքս
առեալ շրջանս՝ ի նոյն նահանջին, լքեալք,
յաղթեալք, մատնեալք ի պարտութիւն...
ի չնչին անագոյն» (էջ 71): Այսպիսի
իրական, ազդու, կախարդիչ և կենդանի
պատկերներով ցայտուն նկարագիրներ
անթիւ են, ուր կը թուի թարգմանիչը
չափազանցօրէն շոյալած ըլլալ իր հոմա-
նիշ բառերը, որոնք սակայն բնաւ ճապաղ
չեն, քանի որ ոճը այնքան սահուն, գու-
նեղ և հրապուրիչ է, որ կը տարուի մարդս
թարգմանչին բուն խոյանքէն, առանց
բնաւ տաղտուկ զգալու: Ուրիշ նոյնպէս
գեղեցիկ հատուած մ'է այն, ուր կը ներ-
կայացուի երջանիկ կարծուած մարդը,
«առողջ մարմնով, զուարթ երեսօք, գու-
նեան գունով, հզօր զօրութեամբ, զուար-
ճալից բերկրութեամբ, կայտառ ի ման-
կութեան, զրգեալ զրգանօք, փափկասուն,
բարեկեցիկ, երանիկ, երջանիկ», և ահա
մէկ օրէն միւսը «յանկարծակի վաղվա-
ղակի հասանէ ի թշուառութիւն, վատէ ի
զօրութենէ, ծնկի ծիւրի, հիւանդութեամբ
ջերանի» և կ'անշնչանայ (էջ 85): Չեմ
գիտեր թէ կան արդեօք մեր ամբողջ գրա-
կանութեան մէջ այսպիսի կուռ, ուժեղ
ու ներշնչող էջեր: Այո՛, այդ գեղեցիկ
պատկերները, իրենց ընդհանուր գծին մէջ,
յոյն հեղինակին մտքին ծնունդն են: Բայց
ո՞վ է անոնց կեանք, լոյս և ոգի տուողը,
որ այնքան յուզիչ և ոգեւորիչ կ'ընէ,
եթէ ոչ հայ թարգմանիչը իր կորովի և
գեղեցիկ լեզուով:

*
* *

Մեր Ոսկեդարու մատենագիրներուն
մէջ՝ ամէնէն նշանաւորներն եղած են,

Եզնիկ, Կորիւն, Ագաթանգեղոս և Փ. Բիւ-
զանդ. այս վերջին երեքը, — իրենց լե-
զուով և ոճով, իրենց խորհելու և արտա-
յայտուելու եղանակով, և նոյն իսկ իրենց
թերի կողմերով, — այնքան կը նմանին
իրարու, որ յատուկ դպրոց մը կը կազ-
մեն, և արդէն ապացուցուած է զրեթէ
անոնց իրարու հետ սերտ յարաբերու-
թիւնը: Իսկ Եզնիկ, թերեւս աւելի բարձր
քան միւսները, իր սեփական ոճով և շա-
րադրութեամբ, ինչպէս նաեւ իր երկասի-
րած նիւթով, ինքն ալ ուրիշ առանձին
դպրոցի մը զուլիս է, որ զժրախտաբար
շատ քիչ հետեւողներ ունեցած է: Գալով
մեր թարգմանչին, այդ երկու դպրոցնե-
րուն ալ կը պատկանի, ինչպէս յայտնի
է իր ոճէն, իր լեզուէն, իր դարձուածնե-
րէն և բացատրութիւններէն, կամ աւելի
ճշդօրէն խօսելով՝ անոնց երկուքին միու-
թեան կապն է: Եւ իրաւացի է, երբ ուշի
ուշով կարդանք և համեմատենք անոնց
զրութիւնները և Բարսղի Վեցօրէից թարգ-
մանութիւնը, պիտի տեսնենք որ ոչ միայն
լեզուական և քերականական նմանութեան
որոշ եզրեր կան անոնց մէջ, այլ կը նշ-
մարուին հոն մի և նոյն բառերու և բայերու՝
նոյն կարգով և իմաստով գործածութիւնը,
նոյն ազատութիւնը քերականութեան կա-
նոններէն, մի և նոյն ասացուածները և
դարձուածները: Եւ մեր թարգմանիչը կըր-
նայ այդ երկու դպրոցներուն ալ պետը
նկատուիլ, որ երկուքին ալ դրութեան հե-
տեւելով, մերթ մէկուն ոճը կը գործածէ և
մերթ միւսին, առանց երբեք թողլու իր
առաջնութիւնը, առանց երբեք զեղեւելու
ո՛ր և է դժուարութեան առջեւ:

Ո՛ւր թողունք որ, ինքը լոկ թարգմա-
նիչ մ'ըլլալով, իր լեզուական հմտութիւնն
և տաղանդը լիովին ցոյց տալու առիթը
ունեցած չէ՛, մինչ միւսները՝ ինքնագիր
հեղինակներ՝ ազատ էին կարգ մը կաշ-
կանդող կապերէ, որոնց ենթարկուած է
թարգմանիչը:

Գալով Եզնիկի, ան որոշ ինքնատիպ
ոճ մ'ունի, որպիսին մեր Ոսկեդարու մա-
տենագիրներէն ոչ մէկուն քով կը գտնուի:

Լեզուն գերազանցօրէն դասական, սեղմ,
կուռ, կտրուկ է, իմաստասէր և պայքա-
րող մտքի մը յատուկ: Պարզ և յստակ,
չի սիրեր աւելորդ պերճանքներ, կը խորշի
բառերը կրկնելէ, և եթէ երբեք ստիպուած
ըլլայ նոյն գաղափարը բացատրելու միւ-
նոյն էջին վրայ՝ հոմանիշ բառով մը կ'ար-
տայայտէ զայն: Բառերն անգամ յախուռն
դասաւորուած չեն, այլ վայելուչ և բա-
նաւոր կարգով մը, որով շարադրութիւնը
աւելի սահուն, ներդաշնակ և յարգարուն
է, քերականական կանոններու զարտուղու-
թիւն չունի. բայերն ընդհանրապէս նա-
խադասութեանց վերջը դրուած, աւելի ու-
ժեղ և արտայայտիչ բան մ'ունին. իր
փաստերը՝ կորովի և յաղթահարիչ են.
երկայրարանութիւնը՝ իր նախասիրած
ձեւն է, որով հակառակորդը կամ պիտի
հոմոգուի, կամ փոխերան պիտի մնայ.
փախուստի տեղ չիլայ:

Այսպիսի լեզու և ոճ մը կը կիրարկէ
նաեւ Վեցօրեայ ճառերուն թարգմանիչը,
այն ամէն անգամ որ կրօնական կամ իմաս-
տասիրական խնդիր մը յուզուի և Բար-
սեղ վէճի բռնուի հերետիկոսներուն կամ
փրկիստիաններուն հետ: Հոն թարգմանիչը
կ'այլափոխուի, հզօր տրամախօս մը, բուն
պայքարող մը կը դառնայ: Կը թողու իր
սովորական պերճախօսութիւնը, լեզուն՝
հատու և հակիրճ կ'ըլլայ, բառերը կշռուած
և չափուած, կրօնքի վարդապետի հոգին
կը ցցուի՝ կ'ընդլզի իր մէջ, և ճշմարտու-
թեան դատը պաշտպանելու նախանձով
վառուած, կը մոռնայ իր թարգմանչի դերը,
և իրը բուն իսկ գրիչ և հեղինակ, այնպիսի
շեշտ մը՝ կորով մը կը դնէ իր խօսքերուն
մէջ, որ շանթահար կը տապալին դիմա-
խօսները: Եթէ ուզէք Բարսեղ հայ լեզուով
մաքաթիլ իր ոսոխներուն դէմ, պիտի չկա-
րենար ասկէ աւելի յաջող և լաւագոյն
կերպով կատարել իր դերը:

Այդ իմաստասիրական և աստուածա-
բանական հակաճառութիւններէն մեծապէս
ազդուած և ներշնչուած կ'երեւի մեր Եզ-
նիկը իր «Եղծ աղանդոց» մատենին մէջ,
ուր այնքան ճարտարօրէն և հմտօրէն գա-

նագան շահեկան հարցեր կը շօշափէ, ի-
մաստասիրական, աստեղագիտական, տիե-
զեաբանական, բնական և աստուածա-
բանական խնդիրներ: Այդպիսի կարեւոր
հարցեր՝ աւելի կամ նուազ ընդարձակօրէն
և տիրաբար՝ կը գտնենք նաեւ պարզուած
և լուսաբանուած Վեցօրեայ ճառերուն մէջ,
ուր զարմանալի զուգադիպութեամբ՝ այդ
խնդիրներուն շուրջը՝ Եզնիկի և մեր թարգ-
մանչին ոճը և լեզուն զրեթէ կը նոյնանան:

Հաւանօրէն Եզնիկ ուղղակի բնագիրը
կարդացած և ներշնչուած է անկէ, հմուտ
ըլլալով յոյն լեզուին: Սակայն չեմ կար-
ծեր վրիպած ըլլալ, եթէ հաստատեմ որ՝
ինչ ինչ տեղեր՝ տեսած ըլլալու է անոր
հայ թարգմանութիւնը, իր մատենը գրած
պահուն և նոյն իսկ առաջ: Հետեւաբար
Ս. Բարսղի սոյն ճառերը թարգմանուած
ըլլալու են Ս. Սահակայ և Մաշթոցի ե-
րիցագոյն աշակերտէ մը, որ եթէ Բիւզան-
դիոն երթալու բարեբախտութիւնն ունե-
ցած չէ՛, ինչպէս ցոյց կու տայ իր հարե-
ւանցի գիտութիւնը յոյն լեզուին, սակայն
մեր Ոսկեդարու մեծագոյն գրիչներէն պէտք
է եղած ըլլայ, ինչպէս ըսինք, և թերեւս
մեր գրերու գիւտէն անմիջապէս վերջն
ուսուցիչ կարգուած այն աշակերտներուն,
որոնք յետոյ Բիւզանդիոն ուղարկուեցան
կատարելագործելու իրենց յունագիտու-
թիւնը. և չէ՛ կարելի՛ որ Եզնիկ ալ այդ
յառաջադէմ և յաջողագոյն աշակերտներէն
ըլլար, որ հետեւաբար մեծ յարգանք կը
զգար իր նախկին ուսուցչին և անոր թարգ-
մանութեան հանդէպ: Թոյլ տրուի ուստի
ինծի՝ քանի մ'օրինակներով հաստատել
ըսածս, դէմ առ դէմ դնելով ինչ ինչ հա-
տուածներ Եզնիկի և Վեցօրեայ ճառերուն
հայ թարգմանութեան, ուր աւելորդ պիտի
ըլլայ երկուքին ալ լեզուի և ոճի նմա-
նութիւնը.

Վեցօրեայ ճառք
(նախնեաց թարգմա-
նութիւն)

Եզնիկ
(Եղծ աղանդոց)

«Ակունք մշտնջենա-
բունք բխեցեն... անդա-
շար, և ոչ պակասեն» (էջ
55):

«Ազրերք մշտաբունք...
հանապազ բխեն և ոչ
պակասեն» (էջ 8):

— « Որպէս շտապարանի իրաւունքն որ համապատասխան էր անհատիկին և ոչ պատկանէր անհատին » (էջ 70) :

Եզնկայ բոլոր գրածը հիւղէի վրայ՝ Ս. Բարսղի ազդեցութիւնը կը կրէ :

Վեցօրեայ ծառք

Եզնիկ

« Չհիւղէ յայտ առնեն, որ էր անհատիկի և անհատական, առանց զոնոյ էր և առանց կերպարանաց... Աստուած ան զոնոյ էր զոյնս և ի կերպարանս և ի կարգս » (էջ 25) :

— « Չի Աստուած իւրովն սքանչելագործ զօրութեամբ ոչ միայն զտիւն է կերպարանաց, այլ և արարիչ բնութեանց » (էջ 28) :

Դիտելի է, որ հոս Բարսղի թարգմանչին « գոյն » ըսածը կը համապատասխանէ Եզնկայ « արդ » բառին, այն է « որակ, արտաքին ձեւ, կերպարանք » :

« Արդ, վասն զի փաստ կար է արիւն ցլու... առանց արեան կամէիւր առնել զլցուցիւն կարօտութեան մարդկան » (էջ 89) :

« Մանրագործութիւնը անգամ բոլորէր ըստ անհատիկի, որոց ըստ հասակի իցէ յաջաց » (էջ 89) :

« Չցլու միս ուտել՝ դարման է մարմնոյ, բայց եթէ զարիւնն որ ըմպէ, սատակի » (էջ 66) :

« Չմանրագործութիւնը ոչ ուտիցէ՝ սատակի է, և խառնեալ ընդ այլ արմատս՝ քնածու լինի քնատաց » (էջ 66) :

Հոս Ս. Բարսղի թարգմանչը, չուզելով հեռանալ բնագրէն, երկար բացատրութիւնը կ'ընէ « ըստ անհատիկի » որոց ըստ հասակի իցէ, մինչ Եզնիկ երկու բառի մէջ կ'ամփոփէ թարգմանչին խօսքը, « քնածու լինի քնատաց » :

Վեցօրեայ ծառք

Եզնիկ

« Եւ կոնիոն (մոլորակն) արմատովն (բոլորէր) զընթացողէն և զիսկ ուղղեն... և զհիւսն ուղղեն » (էջ 89) :

« Մոլորակն, որ առանձին ի յայտնի ինչ ժամանակի սպանող է, նովիմը զմազմ հնացեալս հնարին բոլորէր հատանել » (էջ 67) :

Եզնիկի գրքին շահեկան մասերէն մին է, հերքումը աստեղագէտ քաղենքուն, որոնք մարդոց ծնունդն և ապագան կը կապեն աստղերու կամ արեւուն շարժումներուն հետ, ուր փաստերով և օրինակներով կը հերքէ մի առ մի անոնց մոլար

դրութիւնը (էջ 154-161) : Այս բոլոր հատուածը՝ հետեւողութիւն կամ թեւադրութիւն է Վեցօրեայ մէջ բացատրուած գաղափարներուն, ուր Ս. Հայրը գիտական զօրաւոր փաստերով կը հերքէ հիմնովին այդ աստեղագէտ Բաղդէացիներուն մոլար և ծիծաղելի կարծիքները :

« Իսկ վրեպեալն ի ճշմարտութենէն... զծննդոցն իմն զաստեղատանց յայտ առնել կամէին... և յաստեղացն լինին նշանք պատահարացն մերոց : Չայս ասին քաղդէացիքն, որ միշտ ընդ աստեղս հային » (էջ 116) :

« Եւ ոչ որպէս քաղդէացիքն աստեղանշմարք, որ և զծննդոց պատճառս և զմահուանց՝ յաստեղաց իրեւ ի կենդանաց զնեն » (էջ 154) :

Հոս ալ նոյնպէս Եզնիկ « քաղդէացիքն աստեղանշմարք » ըսելով՝ համառօտեւ է թարգմանչին « քաղդէացիքն » որ ընդ աստեղս հային » բացատրութիւնը :

« Այս անուն, ասին, զանգրահեր և ծաւի և փարփառ է, ի խոյն յաստեղատանն կայր ժամ նորա մեծ և ճոխ լինելոց է... իւր առատաբերէ աստեղ... Որ յեզնի աստեղատանն ծնանի, զործուն և հնազանդ լինելոց է... և որ ի կարծի աստեղատանն ծնանի, մարդասպան զայ... որ ի հարկանել և և թէ կազմ կայ » (էջ 119) :

« Մինչդեռ խոյն է և ծնալից է, և որպէս նայն՝ թաւ և աստեղ... և մինչդեռ եզն է և ծնանիցի ոք, հզօր և բարենշան զաւոց է. և յոր ժամ կարծես է և ծնանիցի ոք, չար և մեղանշան լինելոց է » (էջ 156) :

« Չի եթէ յերկնից զնեն աստեղագէտք զսկիզբն ծննդոց... զինչ պիտոյ իդէ զկերպարանս անասնոցն՝ որ առ մեզ ճարակեն նկարել յերկնս, և մեկնել զծնունդս մարդկան ի խոտակեր անասնոցն » (էջ 120) :

« Ո՞ր և հնա զայնպիսի անուանս զզիշակեալ և ըզխոտակերս յերկնս, զի պատճառք ծննդեան մարդկան լինիցին » (էջ 156) :

« Արդ, ոչ քաղդէացիքն ծնանին հնազանդագ ի փոփոխմանցն, որ լինին ըստ պէսպէս կերպարանաց աստեղացն » (122) : — « Արդ ընդէր ոչ հնազանդ ծնանիցին թաւ զաւոց, և վասն էր ի հարց առ որդիս կարգի զայ ժառանգութիւն թաւ զաւոց... այլ առտիկ տեսանեմք, զի Ոգիւս ծնաւ զՅովսէփ, և Յովսէփ զԱբրահամ, և Աբրահամ զԱբրահամ, և Աբրահամ զԱբրահամ, որք ըստ կարգի թաւաւորեցին » (122) :

« Գարձեալ, որպէս ասին, թէ յորժամ առիւծն իցէ յաստեղատանն՝ թաւաւոր ծնանից է, թէ այնպէս էր, բազում անգամ բազում թաւաւորաց պարտ էր ծնանել, զի ոչ մի միայն ծնանի՝ յորժամ առիւծ յաստեղատանն իցէ, այլ բազում » (էջ 159) : — « Եւ եթէ արդարեւ աստեղն էր պատճառ ծննդեան թաւաւորաց, ապա ոչ թաւաւորք որդի թաւաւոր լինէր... Իսկ եթէ տեսանեմք՝ թէ թաւաւորք

որդի թաւաւոր լինի, որպէս Գալթայ որդի Սողոմոն ի հօրն աթոռ նստաւ, և նորա որդին ի նորա թոռ », ևն » (էջ 160) :

« Եւ որպէս մըջեան՝ յաստեղատանն պատրաստելոյ զկերակուր, և ընդ երկու գէտան կարելոյ՝ զի մի՛ բուսանիցի, և ի ջեր ժամանակս հանելոյ զհատիկն յորջէ անտի և ցամաքեցուցանելոյ » (էջ 175-5) :

Սոյն հատուածներուն համեմատութեանէն արդէն յայտնի կ'ըլլայ, որ Եզնիկ անպատճառ կարգացեր է հայ թարգմանութիւնը Վեցօրեայ ճառերուն, և ճիշդ մը երկարաբան բացատրութիւնները սեղմելու, ամփոփելու, ինչպէս նաեւ փոփոխելու բառերը, կամ պարտկելու համար իր փոխառութիւնը և կամ աւելի վայելուչ ձեւ մը տալու շարադրութեան, բայց ամէն տեղ յաջողած է : Օրինակի համար, վերջին հատուածիս մէջ՝ ուր մըջիւնին վրայ կը խօսուի, լաւագոյն է թարգմանչին « համբար » բառը՝ իբր « պարէն, պաշար » ձեւաւորում, քան թէ Եզնիկի « կեշար » ձեւաւորում, քան թէ Եզնիկի « արեւկայ և պարզ » բացատրութիւնը, քան Եզնիկի « ջեր ժամանակ » ըսածը. գ. աւելի ճիշդ է թարգմանչին « շտեմարան » իբր « միջերանոց », ուր կը պահուի պարէնը կամ ուտեստը, քան թէ Եզնիկի « որջ » :

Յաջորդ հատուածը աւելի եւս կը հաստատէ ենթադրութիւնս, թէ Եզնիկ տեսեր է հայ թարգմանութիւնը, քանի որ այդ կտորը սխալ հասկցուած և թարգմանուած է, որով կը տարբերի քիչ մը բնագրէն : Հեղինակը խօսելով հոս կիրճերու կամ նեղուցներու ջրերուն մակընթացութեան և տեղատուութեան վրայ՝ որ կը պատահի լուսնին ազդեցութեամբ, կ'ըսէ. « Չայս հաստատեն և նուագութիւն և աճումն ջրոց ի կիրճս (ի նեղուցս), որ պատահէ

ըստ փոփոխմանց լուսնի, զի ջուրը է՝ որ պակասեն և է՝ որ լնուն, որպէս թէ տուրեւառ շնչոյ լուսնի երբեմն ձգեալ ծծեսցէ, և երբեմն վարեսցէ զնոսա յետս », ևն : Տեսնենք արդ թարգմանչին և Եզնիկայ խօսքերը :

Վեցօրեայ ծառք

Եզնիկ

« Եւ զնացը իմն են յաշխարհիս Երկրացոց, որ երբեմն ցուցանեն զյաւառ լուսնս լիութեան իւրեանց, և երբեմն զիջանէ ի լիութեան անտի, և այն՝ ըստ զնացից լուսնին փոփոխի... կալ մնալ ի պակասութեան՝ ընդ պակասելն լուսնի... և ընդ լնու լուսնին՝ յոր զնացին » (էջ 133) :

« Եւ յԵրուսաղէմ տեղիք ինչ են ծովուց, որոց ջուրն՝ ըստ աճել լուսնին՝ աճէ, և ըստ լնուլն՝ լնու, և ըստ պակասելն՝ պակասէ » (215) :

Հոս դիտելի է, թէ յոյն τοῖς εὐρίποις բառը՝ որ կը նշանակէ « ի կիրճս, ի նեղուցս », շփոթելով հայ թարգմանչը Εὐρώπη (Եւրոպէ) անուան հետ, զրեւ է հայերէն « յաշխարհին Երկրացոց » : Սրտ, եթէ Եզնիկ յոյն բնագիրը կարդացած ըլլար, բնականաբար պիտի զնէր իր գրքին մէջ « ի նեղուցս » կամ « ի կիրճս », և ոչ թէ « յԵրուսաղէմ » :

Վեցօրեայ ծառք

Եզնիկ

« Բայց անհամ և անոտի պատմութիւն՝ որ իբրեւ զբարբառ ծնութեան զաստեղացի... շարժելով, աստեղ, շարժեն մարդիկ զլուսնին և յերկիր իջուցանեն... թէ որ քան զբազում աշխարհս մեծ է, թէ ի կալ մի փոքրիկ ամփոփիցի » (էջ 217) :

« Եւ չէ՛ հնար լուսնի յերկիր իջանել, որպէս կախարդ... բարբառնէն, թէ զլուսնին իջուցանիցեն, որում չէ՛ մարթ լինել, թէ որ քան զբազում աշխարհս մեծ է, թէ ի կալ մի փոքրիկ ամփոփիցի » (էջ 217) :

« Եւ աստէն յերկրի, եւ թէ կամիս միտ զնել, գտանես ջուր և օդ և հուր, զի հուր ի քարէ և յերկաթոյ ելանէ... և ի բախել ընդ միմեանս երկաթոյ և քարի, երեւի լիովին բնութիւն չորոյ... Եւ օդ եւս զարմաւ ընդ երկրի խառն է... յորժամ ընդունիցի երկիր զխոտութիւն (անձրեւոյ) և զլեռնութիւն արեւական, փողէ յերկրէ օդ՝ վերաշայ իւրեւն ի նմանութիւն զուրբոյ » (էջ 14) :

« Եւ օդ ընդ ջուրս և ընդ երկրի խառն է... և զի ընդ երկրի՝ նոյն օդ խառն է... և ընդ ջուրս՝ հուր խառն է, ի քարանցն հանելոց ջրոյ՝ զոր ընդ միմեանս շփեցեն և հանիցեն հուր՝ յայտ յանդիման ցուցանէ... Եւ զի ընդ երկրի նոյն օդ խառն է, յորժամ անձրեւ լեալ իցէ և արեւ տայցէ, ի զուրբոյն՝ որ ի սրտէ երկրին ի վեր ցուաշայցէ՝ յայտ յանդիման երեւի » (էջ 219-220) :

Այսպիսի նմանութեան և հետեւողութեան կէտեր և հետքեր կ'երեւին դարձեալ Եզնկի (էջ 186-187, 191-193, 200, 214) և Վեցօրեայ ճառերուն թարգմանութեան մէջ (էջ 14-17, 19-20, 114-115), ուր կը խօսուի՝ երկնքին և երկրիս ոչնչի վրայ հաստատուած ըլլալուն, ծանր և թեթեւ մարմիններու, արեւուն և լուսնի առնչութեանց, և անոնց շուրջը երեւցած նշաններուն և անձրեւներու պատճառներուն վրայ: Դարձեալ Եզնկի (էջ 174-175) կը թուի ներշնչուած ըլլալ Ս. Բարսեղէն (էջ 162-163), ուր կը նկարագրուին թռչուններուն այլեւայլ բնական ազդեցութիւնը և անոնց երամովին երթալը դէպ ի ձմերոցները, ուր նոյնպէս լեզուական նմանութիւններ կը նշմարուին երկուքին մէջ: Հուսկ, մի և նոյն տիրող

գաղափարը, և լեզուական ինչ ինչ նմանութիւններ, կ'երեւին դարձեալ Վեցօրեայ հայ թարգմանութեան (էջ 159-160) և Եզնկի մէջ (յէջ 221, 226), ուր երկուքն ալ՝ զրեթէ միեւնոյն փաստերով և պատճառաբանութեամբ՝ կը հերքեն իմաստասէրներուն և յատկապէս Պիւթագորի կարծիքները ոգեփոխութեան մասին:

Արդէն յայտնի է, թէ Անանիա Շիրակացի իր «Յաղագս երկնից» գրքին մէջ ամբողջ էջերով բառ առ բառ օրինակներ է Վեցօրեայ ճառերուն հայ թարգմանութեան (Գ, Դ և բոլոր Զ ճառը), — ինչպէս նաեւ մեր բոլոր այն մատենագիրները՝ որոնք «Ծննդոց» գրքին մեկնութիւնը գրած են, իրենց միակ և գլխաւոր աղբիւր ունեցեր են Ս. Բարսեղի Վեցօրեայ հայ թարգմանութիւնը:

Հ. Յ. Թ.

Թ Ա Փ Ա Դ Ո Լ Ա Կ

(ՍՏՈՒԳԱՐԱՆԱԿԱՆ)

Պրն. Ատրպետ կը ծանուցանէ՝ թէ ինքը իս. Հայաստանի կառավարութեան յանձնարարութեամբ գնացած է Շիրակ գաւառի թափաղարակ գիւղը, ուսումնասիրելու զուրանը և ստուգելու գիւղի անմրոնելի աւանդներ, կամ ուրիշ յարմար անուն մը ստեղծելու: Մարդ պիտի կարծէ որ Ատրպետ ծանր աշխատութիւն, երկար ճամբորդութիւն ըրած ըլլայ գտնելու «Գանկածինը», որ նոյնքան անմրոնելի է որքան թափաղարակ կոչումը, որ կրնայ դեռ ժողովրդի աւանդութեամբ հասկնալի ըլլալ: Պրն. Ատրպետ կ'իմրի կեցած, իրենց տան տանիքէն կրնար հրաշափառապէս տեսնել կապոյտն, Սպիտակափառն Արագածը, շէրտեղ և գեղեղ Հարսնաքարը (կեալին—Խայկայ լեռը)՝ Քեափանակներու և Չրախլուայ վե-

րեւ կանգնած շիտակ՝ նոր հարսի նման: Քաղաքէն մինչեւ Իլխիապի գեղը և Լապան տօլտիւրան կոչուած աւերակը կ'երկարի դուրանը, որու զրեթէ կեղերնի մէջ ցամաք առուի եզերքը շինած են թափաղարակ գիւղը 1830ին՝ Ալաշկերտէն և Բասենէն եկած հայ գաղթականները:

Շատ ըսեր վրձեր են այդ անուան վրայ՝ նոյն ինքն գիւղացիները, ազատելու իրենց հարեւան այլ գիւղացիներու ծաղրածութիւններէն: Լսած եմ. 1) Գաղթականներն այդ անունը գտած են անյիշատակ ժամանակէ. աւելի լուսամիտ թէ չարամիտ կատակարան գիւղացի սեւ ու սպիտակի վրայ նայող տիրացու մը ըսեր է. 2) Երբ յետին գաղթականութիւնն եկած է, անոր առաջ նորդն եղած է «Երեւելի» մէկը քոփալ դաշ-

1. Տե՛ս «Բաղամիւլէյ» 1834, Թ. 7-8, էջ 274 «Թա-

փաղարակ» (Գանկածին):

րաք մը: Ժողովրդի բերնի մէջ, դարձեր է քափաղարակ կամ քափաղարակ: 3) Անիի աւերածէն յետոյ երկար դարեր անտէր մնացած երկիրը, խաներու, բէկերու անհաստատ սեփականութիւն դարձեր էր, օրինակի համար 1812ին երբ Նահապետեան տունը բերած է մաս մը գաղթականին և բնակեցուցեր է թափաղարակ, Տիրակար, Քեափանակներ եւն, ինքը Լեւոն Նահապետեան բռներ է Քաւթաղու գիւղը. իրենց դրացի Բէկքէնտն կամ Պարոնի գիւղն և Ղաստումալի Մոլլայի գիւղը՝ սեփականութիւն եղած են պարսիկ աղաներու, որոնք Ռուսի տիրապետութեան ժամանակ թողեր հեռացեր են և այժմ են հայաբնակ: Ուստի գաւառի գիւղացիները կ'ըսէին թէ թափաղարակի դուրանն ալ եղած է սեփականութիւն աղայի մը՝ որ իր բազմաթիւ ոչխարները գարնան գլուխ, ապրիլին կը դրէ եզեր այդ դուրանը դալար խոտով ծածկուած, իբր ոչխարներ արածելու տեղ. գառներ կանանչի վրայ ծնելով՝ չեն փասուիր հողմէն և տղմէն: Արդ հայերս է դարուն ոչխարի համար կ'ըսէին «ծնունդ արծալեկ». Յակոբ Նահապետ Եսաւի բռնադատութեան ազատելու համար, անոր հետ չերթալու պատճառ բռնեց ոչխարներու ծնունդ արձակելը. այժմեան հայերը, խառն ապրելով բուրդ ազգի հետ՝ անոնցմէ կը բռնեն հովիւներ, որովհետեւ անոնք քաջ խաշնարած են, անոնցմէ սորված են մերոնք ըսել, ոչխարի դօր ինկաւ: Ոչխարի խառնունքը (խօշթող) կ'ըլլայ Հոկտեմբերի 25ին, և ծնունդ կ'արձակեն մարտի 25ին, և այնպէս որ ծնած ոչխարներն և ծնելիքները ապրիլին գոմերէն դուրս կը հանեն կանաչի վրայ: Եւ իսկապէս այդ թափաղարակ ըսուած տեղէն շատ անգամ ձիով անցեր դարձեր եմ մեր ազգականներուն երթալու համար, զիտեր եմ որ վրաններու զարնուած տեղերու հետքեր, մոխրակոյտերու և ամաններու ջախջախումով բեկորներ կը նշմարուին: Եւ շատ բնական է, մինչեւ հիմակ ալ բուրդեր վրանաբնակ են, սարեր ելած ժամանակ, կ'ընտրեն դարեւանդ մը՝ վրանը զարնելու հա-

մար: Ուստի երբ գաղթականն հասեր է և տեսեր է հովուական հանգրուաններու տեղեր, ընդուներ է արդէն «նախադործուած» անունը և իր գիւղը կոչեր է «Թափաղարակ»: Որով ըստ աւանդութեան՝

Թափա = բլուր
Դուրակ = ծննդավայր { Թափաղարակ:

Ատրպետ կ'աւելցնէ և Ար մը որ մեր լեզուով կը նշանակէ ոտք և ոչ քարանդակ:

Իսկ կեալին — Խայկայ լեռան կոչումն, հնուց ի վեր ժողովրդեան մէջ զրոյց կը պտտի, որ երբեք հարսնեւորներ անոր մօտէն անցած ժամանակ՝ գլուխին տաքցած վեր վար կը քշեն իրենց ձիերը. հարսի խոտերախ ձին կը բորբոքի և սանձակոտոր կ'ընթանայ, հարսը անգոր կը մնայ զսպելու ձին և սա կը տանի և սարի գլխէն ինքզինքը և հարսը վար կը ձգէ: Ահա այդ յիշատակին համար է որ այդ սարը այլազգիներէն կոչուած է կեալին Խայկայ: Բայց փոխանակ այդ արիւնտ պատմութեան, որ կրնայ ճիշդ եւս ըլլալ, մենք բնութեան երեւոյթներէն կը հետեւցնենք կոչումը: Այդ սարը Չրախլու գիւղի ետեւ ուղղորդ կանգնած է. երբ գարնան գեղեցիկ եղանակին դաշտի երեսը կը տաքնայ և օդի վերի խաւերը դեռ ցուրտ են, կը գոյանայ թանձր մշուշ մը, որ փամպակու սարերէն և խանվալուի դաշտի երեսէն կը հասնի Հարսնաքարի գլուխը և կը դիզուի. պահ մը երեւակայութեան կը թուի ուղղորդ կանաչագոյն հարս մը, սպիտակ քողը երեսին: Ժողովրդական աւանդներ գտած են այդ նմանութիւնը և գուցէ երգած են հետեւեալը.

Եւզկիւլի կազկիւլի, կազկիւլի կեյիւն,
աղկետա քառամ տիւզկիւնի կեյիւն...

Ժողովուրդը առասպել կը սիրէ, եթէ չկայ կը ստեղծէ: Բայց մեզի անկարելի բան կը թուի կեալին Խայկայի գլուխը Անահայտ արծան գտնուիլը: Եթէ վիշապազանց ջրի աստուածուհին է, այն սաւրահարթի վրայ նշանաւոր աղբիւրներ և գետեր չկան: Գրանիդէն մարդապատկեր

1. Ինչպէս Նիզ գաւառի Ապարանները: